**Հաստատված է ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ**
**«_31_ »__08__ 2022 թ.-ի նիստում (արձ. թիվ 1):**
**Ամբիոնի պետ, ոստ. գնդապետ**
**Ա. Հովհաննիսյան ……………………………..**
**(ստորագրություն)**

**……………………………..**
**(ամիս ամսաթիվ)**

## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
## ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| **ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ** | | ՀՀ քրեական դատավարության իրավունք – 2 (հեռակա ուսուցում) |
| | | |
| **ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ** | | |
| | | |
| **ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | Իրավագիտություն |
| | | |
| **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** | | Իրավագիտություն |
| | | |
| **ԱՄԲԻՈՆ** | | Քրեական դատավարության ամբիոն<br>E-mail: qrdatambion@mail.ru |
| | | |
| **ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ** | | Ա. Հովհաննիսյան (ի. գ. թ., դոցենտ)<br>E-mail: qrdatambion@mail.ru Հեռ.՝ +374 93000762 |
| | | |
| **ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ** | | 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակ / 5-րդ կուրսի 1-ին կիսամյակ |
| | | |
| **ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ** | | բակալավր |

| | | |
|---|---|---|
| **ԿՐԵԴԻՏՆԵՐ** | | **6 (վեց)** |
| | | |
| **ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ** | | «ՀՀ քրեական դատավարության իրավունք – 4» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 180 ժամ, որից 20-ը՝ դասախոսություն, 4-ը՝ սեմինար, 4-ը՝ գործնական, 152-ը՝ ինքնուրույն աշխատանք:<br><br>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են 80 րոպե տևողությամբ: Դասընթացը գնահատվում է միջանկյալ քննությունների անցկացմամբ՝ 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակում և 5-րդ կուրսի 1-ին կիսամյակում, և եզրափակիչ քննության անցկացմամբ՝ 5-րդ կուրսի 1-ին կիսամյակում: |

| | | |
|---|---|---|
| ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ | | Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն», «ՀՀ սահմանադրական իրավունք», «ՀՀ քրեական իրավունք», «ՀՀ քրեական դատավարության իրավունք – 1» դասընթացների իմացության վրա: |
| | | |
| ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ | | «ՀՀ քրեական դատավարության իրավունք – 2» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են առաջին ատյանի դատարանում դատաքննության ընթացակարգը և հանգուցալուծման հնարավոր տարբերակները, հատուկ կարգով դատաքննության իրականացման կառուցակարգերը, դատական վերանայման ընդհանուր պայմանները, վերաքննության և վճռաբեկության կառուցակարգերը, հատուկ և բացառիկ վերանայման, ինչպես նաև առանձին անձանց նկատմամբ իրականացվող և առանձին տեսակի վարույթները: |
| | | |
| ՆՊԱՏԱԿ/ԽՆԴԻՐՆԵՐ | | Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ դատական վարույթների օրինաչափությունների, հատուկ և բացառիկ վերանայման, ինչպես նաև առանձին անձանց նկատմամբ իրականացվող և առանձին տեսակի վարույթների նախաձեռնման վերաբերյալ, և ձևավորել այդ վարույթների ընթացակարգը սահմանող նորմերի մեկնաբանման, դրանց ընթացքում շրջանառվող փաստաթղթերի պատրաստման կարողություններ:<br>Դասընթացի խնդիրներն են՝<br>1. սահմանել առաջին ատյանի դատարանում դատաքննության կառուցվածքը և բովանդակային տարրերը, բացատրել նախնական, հիմնական և լրացուցիչ դատալսումների կարգը.<br>2. ներկայացնել համաձայնեցման և համագործակցության վարույթների ընթացքը և հանգուցալուծման հնարավոր տարբերակները.<br>3. բացատրել դատական վերանայման դերը և նշանակությունը, ներկայացնել վերաքննության և վճռաբեկության՝ որպես դատական վերանայման ինքնուրույն կառուցակարգերի բովանդակությունը և կարգը.<br>4. ներկայացնել հատուկ վերանայման վարույթի հիմքերը, հատուկ վերանայման կարգով բողոքարկման սուբյեկտները և առարկան.<br>5. ներկայացնել բացառիկ վերանայման վարույթի հիմքերը, բացառիկ վերանայման կարգով բողոքարկման սուբյեկտները և առարկան.<br>6. ներկայացնել հատուկ և բացառիկ վերանայման կառուցակարգերում համապատասխան բողոքների քննարկման կարգը.<br>7. ներկայացնել առանձին անձանց նկատմամբ |

| | | |
|---|---|---|
| | | իրականացվող և առանձին տեսակի վարույթներում դատաքննության առանձնահատկությունները: |
| | | |
| **ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**<br><br>***1. Կարողանա՝*** | | 1. բացատրել առաջին ատյանի դատարանում դատաքննության կառուցվածքը և բովանդակային տարրերը.<br>2. ներկայացնել նախնական, հիմնական և լրացուցիչ դատալսումների կարգը.<br>3. բացատրել և մեկնաբանել համաձայնեցման և համագործակցության վարույթների ընթացքը և հանգուցալուծման հնարավոր տարբերակները.<br>4. բացատրել դատական վերանայման դերը և նշանակությունը.<br>5. ներկայացնել վերաքննության և վճռաբեկության՝ որպես դատական վերանայման ինքնուրույն կառուցակարգերի բովանդակությունը և կարգը.<br>6. պատրաստել առաջին ատյանի դատարանում ընդհանուր և հատուկ կարգերով իրականացվող վարույթների դատախազի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթեր.<br>7. կազմել վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ.<br>8. բացատրել հատուկ վերանայման վարույթի հիմքերը, հատուկ վերանայման կարգով բողոքարկման սուբյեկտները և առարկան.<br>9. բացատրել բացառիկ վերանայման վարույթի հիմքերը, բացառիկ վերանայման կարգով բողոքարկման սուբյեկտները և առարկան.<br>10. բացատրել հատուկ և բացառիկ վերանայման կառուցակարգերում համապատասխան բողոքների քննարկման կարգը.<br>11. բացատրել առանձին անձանց նկատմամբ իրականացվող և առանձին տեսակի վարույթներում դատաքննության առանձնահատկությունները: |
| **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** | | |

| | | |
|---|---|---|
| **Հիմնական** | | 1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2/ Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան. – Եր., Տիգրան Մեծ, 2017:<br>2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս. Երևան, Երևանի համալս. հրատ., 2010:<br>3. Уголовный процесс: учебник / под ред.: Божьев В.П. – 4-е изд., перераб. и доп. – М.: Спарк, 2004.<br>4. Уголовно-процессуальное право Российской Федерации: учебник / отв. ред. П.А. Лупинская. – М., 2011.<br>5. Уголовный процесс. Общая и Особенная части: учебник для юридических вузов и факультетов / под ред.: В.В. Вандышева – М.: Контракт, 2014.<br>6. Уголовно-процессуальное право: учебник для бакалавриата и магистратуры / под общ. ред.: В.М. Лебедева. – 2-е изд., пер. и доп. – М.: Издательство Юрайт, 2017. |
| **Լրացուցիչ** | | 1. *Ефимичев, П.С.* Расследование преступлений: теория, практика, обеспечение прав личности: монография / П.С. Ефимичев, С.П. Ефимичев. – М.: Юстицинформ, 2012.<br>2. *Бордиловский, Э.И.* Приостановление, возобновление, прекращение уголовного дела и окончание предварительного следствия: учебное пособие / Э.И. Бордиловский. – М., 2004.<br>3. *Степанова, Н.А.* Недостатки в организации работы следователей по делам, предварительное следствие по которым приостановлено на основании п. п. 3, 4 ч. 1 ст. 208 УПК РФ / Н.А. Степанова // Российский следователь. – 2010. - № 12.<br>4. *Шихова Л.* Следствие по приостановленным уголовным делам // Законность. – 2005. – № 6.<br>5. *Безруков С.С., Попков Н.В.* Реализация следователем права на обжалование решения прокурора и сроки предварительного следствия: конфликт неизбежен // Российский следователь. – 2011. – № 7.<br>6. *Булатов, Б.Б.* Возмещение в порядке ч. 3 ст. 133 УПК РФ вреда, причиненного подозреваемому незаконным задержанием / Б.Б. Булатов, В.В. Николюк // Российский следователь. – 2011. – № 1.<br>7. *Миньковский, Г.М.* Окончание предварительного расследования и право обвиняемого на защиту: монография / Г.М. Миньковский. – М., 1957.<br>8. *Николюк, В.В.* Субъекты права на возмещение вреда в соответствии с ч. 3 ст. 133 УПК РФ / В.В. Николюк // Российский судья. – 2011. – № 4.<br>9. *Рыжаков, А.П.* Окончание предварительного расследования: учебное пособие. – М., 1999.<br>10. *Зуев, С.В.* Обжалование в кассационном и надзорном порядке судебных решений, принятых в ходе досудебного производства по уголовным делам / С.В. Зуев // Российский следователь. – 2011. – № 23.<br>11. *Ковтун Н.Н.* Судебный контроль в уголовном судопроизводстве России. – Н. Новгород: Нижегородская правовая академия, 2002.<br>12. *Мельников В.Ю.* Судебная реформа – некоторые вопросы судебного контроля / В.Ю. Мельников // Российский судья. - 2008.- № 1.<br>13. *Цурлуй О. Ю*. Судебный контроль в досудебном производстве: краткий историко-правовой анализ // Актуальные проблемы россий- |

| | | |
|---|---|---|
| | | ского права. 2015. № 1.<br>14.*Питулько К.В.* Судебный контроль за применением заключения под стражу и реализация права обвиняемого (подозреваемого) на защиту в уголовном процессе РФ – СПб.: Изд-во "Левша. Санкт-Петербург", 2000.<br>15.*Пиюк А.* Состязательность на стадии предварительного расследования и судебный контроль // Рос. юстиция. – 2000. – № 4.<br>16.*Лупинская, П.А.* Решения в уголовном судопроизводстве: теория, законодательство, практика: учебное пособие / П.А. Лупинская. – М.: Инфра, 2012.<br>17.*Гуськова А.П.* Процессуально-правовые и организационные вопросы подготовки к судебному заседанию по УПК РФ / А.П. Гуськова. – Оренбург, 2002.<br>18.*Леви, А.* Отказ государственного обвинителя от обвинения / А.Леви // Законность – 2011. – № 6.<br>19.*Рыбалов К.А.* Особый порядок судебного разбирательства в Российской Федерации и проблемы его реализации: монография / К.А.Рыбалов. – М.: Юрлитинформ, 2012.<br>20.*Алиев Т.Т., Громов Н., Царева Н.* Дополнительные материалы в судах кассационной и надзорной инстанций. Российский судья. № 1, 2003.<br>21.*Божьев В.П.* Пределы прав суда кассационной инстанции. Законность. № 11, 2003.<br>22.*Демидов В.* Производство по уголовным делам в суде надзорной инстанции. Российская юстиция. № 3, 2003.<br>23.*Докина И.А.* К вопросу о применении нового УПК РФ в суде кассационной инстанции. Российский судья. № 2, 2003.<br>24.*Ковтун, Н.Н.* Порядок апелляционного обжалования приговора: монография. – *М., 2013.*<br>25.*Николаев, М.Ю.* Решение суда апелляционной инстанции по уголовным делам: учебное пособие. – М., 2013.<br>26.*Рукавишникова, А. А.* Производство в суде кассационной инстанции в системе проверки судебных решений в уголовном процессе России // Вестн. Том. гос. ун-та. Право. 2015. № 4 (18).<br>27.*Ведищев, Н.П.* Возобновление производства по уголовному делу ввиду новых или вновь открывшихся обстоятельств: монография. / Н.П. Ведищев. – М., 2014.<br>28.*Николюк, В.В.* Расследование и судебное разбирательство уголовных дел о преступлениях несовершеннолетних: учебное пособие / В.В. Николюк.– 2004.<br>29.*Трунова, Л.К.* Особенности применения мер уголовно- процессуального пресечения в отношении несовершеннолетних / Л.К. Трунова // Российский судья.– 2010.– № 10.<br>30.*Игнатов С.Д.* Особенности процессуальной деятельности адвоката-защитника по делу несовершеннолетнего подсудимого в суде первой инстанции // Адвокатская практика. № 4, 2003.<br>31.*Андреева Ю.С.* Особенности производства процессуальных действий в досудебном уголовном производстве в отношении иностранных лиц, пользующихся дипломатическим и консульским иммунитетами. Автореф. дис. ... канд. юрид. наук. – Люберцы, 2010.<br>32.*Андреева Ю.С.* Особенности возбуждения уголовных дел в отно- |

| | | |
|---|---|---|
| | | шении лиц, пользующихся иммунитетом от процессуальных действий в соответствии с общепризнанными принципами и нормами международного права и международными договорами РФ // Вестник Московского университета МВД России. - М.: Изд-во Моск. ун-та МВД России, 2009. № 11.<br>33.*Богаткина Р. Ш., Садыкова И. В.* Актуальные проблемы расследования уголовных дел с участием иностранных граж-дан и лиц, обладающих дипломатическим иммунитетом: теория и практика // Вестник Казанского юридического института МВД России. 2015. № 2 (20).<br>34.*Даев В. Г.* Иммунитеты в уголовно-процессуальной деятельности// Правоведение. 2012. № 3.<br>35.Руднев В.И. Иммунитеты от уголовного преследования // Журнал российского права. - М.: Норма, 1998, № 7.<br>36.*Рыжаков, А.П.* Производство по применению принудительных мер медицинского характера: учебное пособие / А.П. Рыжаков.– М., 2013.<br>37.*Гельмель, В.Я.* Досудебное производство по уголовным делам о применении принудительных мер медицинского характера: учебно-практическое пособие / В.Я. Гельмель, В.Н. Майорчик, Е.Н. Петухов – Барнаул, 2010.<br>38.*Калугин, А.Г.* Международное сотрудничество в сфере уголовного судопроизводства: вопросы теории и практики: учебное пособие / А.Г. Калугин, Д.В. Шинкевич. – Красноярск: СибЮИ МВД России, 2006.<br>39.*Калугин, А.Г.* Теоретические и практические проблемы оказания международной правовой помощи по уголовным делам: учебно-практическое пособие / А.Г. Калугин, Д.В. Шинкевич. – Красноярск: СибЮИ МВД России, 2006.<br>40.*Калугин, А.Г.* Особенности уголовно-процессуального доказывания при оказании международной правовой помощи по уголовным делам: учебное пособие / А.Г.Калугин, Д.В. Шинкевич. – Красноярск: СибЮИ МВД России, 2005.<br>41.*Шинкевич, Д.В.* Особенности доказывания по уголовным делам при оказании правовой помощи иностранными государствами: учебно-практическое пособие / Д.В. Шинкевич. – Красноярск: СибЮИ МВД России, 2006. |

| | | |
|---|---|---|
| **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ** | | Բաղադրիչ 1 - 10 % (միջանկյալ քննություն - 1)<br>Բաղադրիչ 2 - 10 % (միջանկյալ քննություն - 2)<br>Բաղադրիչ 3 - 80 % (ամփոփիչ քննություն) |
| | | |
| **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ** | | |

| Գնահատման արդյունարար միավոր | Գնահատականը տառանշումով | |
|---|---|---|
| 18-20 | Գերազանց | Միջանկյալ գնահատման միավոր |

| | | | |
|---|---|---|---|
| 13-17 | Լավ | Հարց 1 | Հարց 2 |
| 8-12 | Բավարար | 1 միավոր | 1 միավոր |
| 0-7 | Անբավարար | | |
| 0 | Չներկայացած | | |

| | | |
|---|---|---|
| | | |
| **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ** | | Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» առաջադիմություն:<br>Սովորողի գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝<br>ա) «Գերազանց», եթե սովորողը խորը և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.<br>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.<br>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները.<br>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները: |
| | | |
| ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին: |
| **Ներկայություն** | | Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը: |
| **Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ** | | Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր: |

| | | |
|---|---|---|
| **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ** | | Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում:<br>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը՝ ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: |

**ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ**

**<u>4-րդ կուրսի 2-րդ կիսամյակ</u>**

| **Թեմա 9**<br>Դատաքննությունն առաջին ատյանում: Համաձայնեցման և համագործակցության վարույթները<br>**(4 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական պարապմունք)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1) Դատաքննությունն առաջին ատյանի դատարանում<br>2) Համաձայնեցման վարույթը<br>3) Համագործակցության վարույթը | **1.** Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>**2.** Հարցեր 2-3՝ գործնական պարապմունք – համաձայնության ձևաթղթի և համաձայնեցման վարույթով դատավճռի կազմում:<br>**3.** Հարց 3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

| **Թեմա 10**<br>Դատական վերանայման ընդհանուր պայմանները: Վերաքննությունը և վճռաբեկությունը<br>**(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1) Դատական վերանայման ընդհանուր պայմանները<br>2) Վերաքննությունը<br>3) Վճռաբեկությունը | 1. Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>2. Հարցեր 1-3՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում:<br>3. Հարցեր 1-3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

**5-րդ կուրսի 1-ին կիսամյակ**

| **Թեմա 11**<br>Հատուկ և բացառիկ վերանայումը<br>**(2 ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Հատուկ վերանայումը<br>2. Բացառիկ վերանայումը | Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>Հարցեր 1-2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

| **Թեմա 12**<br>Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթը<br>**(2 ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի ընդհանուր պայմանները<br>2. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով ապացուցման առարկան<br>3. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ մինչդատական և դատական վարույթների առանձնահատկությունները | Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>Հարցեր 2-3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

| **Թեմա 13**<br>Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթը<br>**(4 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական պարապմունք)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթի ընդհանուր բնութագիրը և այդ վարույթով ապացուցման ենթակա հանգամանքները<br>2. Բժշկական հարկադրանքի մինչդատական վարույթը<br>3. Բժշկական հարկադրանքի դատական վարույթը | **1.** Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>**2.** Հարց 2՝ գործնական պարապմունք – քրեական վարույթը բժշկական հարկադրանքի վարույթի փոխակերպելու մասին որոշման և եզրափակիչ ակտի կազմում:<br>**3.** Հարց 3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

| **Թեմա 14**<br>Իրավաբանական անձի վերաբերյալ վարույթը<br>**(2 ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Իրավաբանական անձին վերագրվող հանցանքների վերաբերյալ վարույթի ընդհանուր պայմանները<br>2. Իրավաբանական անձի վերաբերյալ մինչդատական վարույթը<br>3. Իրավաբանական անձի վերաբերյալ դատական վարույթը | **1.** Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>**2.** Հարց 1-3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

| **Թեմա 15**<br>Մասնավոր մեղադրանքով վարույթը<br>**(2 ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Մասնավոր մեղադրանքով վարույթի ընդհանուր պայմանները<br>2. Մասնավոր մեղադրանքով դատական վարույթը | **1.** Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>**2.** Հարց 2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

| **Թեմա 16**<br>Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթը<br>**(2 ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթի (այսուհետ՝ հեռակա վարույթ) ընդհանուր պայմանները<br>2. Հեռակա վարույթի իրականացման առանձնահատկությունները | **1.** Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>**2.** Հարց 2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

| **Թեմա 17**<br>Միջազգային պայմանագրերով սահմանված անձեռնմխելիությունից և արտոնություններից օգտվող անձանց վերաբերյալ վարույթը<br>**(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Միջազգային պայմանագրով սահմանված արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող անձանց վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները<br>2. Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձինք և նրանց գտնվելը ՀՀ իրավազորության ներքո<br>3. Դիվանագիտական անձեռնմխելիության և արտոնությունների ձևերը | **1.** Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>**2.** Հարցեր 1-3՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում:<br>**3.** Հարց 3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

## Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր
**«ՀՀ քրեական դատավարության իրավունք - 2» առարկայի միջանկյալ (ընթացիկ) 1-ին քննության**

1. Առաջին ատյանի դատարանում նախնական դատալսումները
2. Առաջին ատյանի դատարանում հիմնական դատալսումները
3. Առաջին ատյանի դատարանում լրացուցիչ դատալսումները և դատավճիռ կայացնելը
4. Համաձայնեցման վարույթ կիրառելու հիմքը և պայմանները
5. Համաձայնության վերաբերյալ բանակցությունները և համաձայնության կնքումը.
6. Համաձայնեցման վարույթով լրացուցիչ դատալսումները և դատավճիռ կայացնելը
7. Համագործակցության վարույթի նպատակը և կիրառման պայմանները
8. Համագործակցության միջնորդությունը և համագործակցության վարույթով իրականացվող նախաքննությունը
9. Համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգը
10. Դատական վերանայման բողոքը
11. Դատական վերանայման բողոքի հիման վրա կոլեգիալ կազմով եզրափակիչ դատական ակտ կայացնելը
12. Վերաքննության նշանակությունը, առարկան, սուբյեկտները և ժամկետները
13. Վերաքննիչ բողոքարկման կարգը և վերաքննության սահմանները
14. Վերաքննության կարգով իրականացվող դատաքննությունը
15. Վերաքննության կարգով բողոքարկված դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերը
16. Վճռաբեկության էությունը, առարկան և սահմանները
17. Վճռաբեկ բողոքի ընդունման պայմանները և բողոքին ներկայացվող պահանջները
18. Վճռաբեկ բողոքով նախնական վարույթը
19. Վճռաբեկ բողոքով դատաքննությունը
20. Վճռաբեկության կարգով բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերը

## Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

**«ՀՀ քրեական դատավարության իրավունք - 2» առարկայի միջանկյալ 2-րդ քննության**

1. Հատուկ վերանայման էությունը, սահմանները, դատաքննության ընդհանուր կարգը
2. Հատուկ վերանայումը վերաքննիչ դատարանում
3. Հատուկ վերանայումը վճռաբեկ դատարանում
4. Բացառիկ վերանայման էությունը և նշանակությունը
5. Բացառիկ վերանայման ընդհանուր դրույթները
6. Նոր ի հայտ եկած հանգամանքներով նախնական վարույթը
7. Բացառիկ վերանայման դատական վարույթը
8. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի ընդհանուր պայմանները
9. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով ապացուցման առարկան
10. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ մինչդատական և դատական վարույթների առանձնահատկությունները
11. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթի ընդհանուր բնութագիրը և այդ վարույթով ապացուցման ենթակա հանգամանքները
12. Բժշկական հարկադրանքի մինչդատական վարույթը
13. Բժշկական հարկադրանքի դատական վարույթը

**ՀԱՐՑԱՇԱՐ**

«ՀՀ քրեական դատավարության իրավունք - 4» առարկայի ամփոփիչ (եզրափակիչ) քննության

1. Առաջին ատյանի դատարանում նախնական դատալսումները
2. Առաջին ատյանի դատարանում հիմնական դատալսումները
3. Առաջին ատյանի դատարանում լրացուցիչ դատալսումները և դատավճիռ կայացնելը
4. Համաձայնեցման վարույթ կիրառելու հիմքը և պայմանները
5. Համաձայնության վերաբերյալ բանակցությունները և համաձայնության կնքումը.
6. Համաձայնեցման վարույթով լրացուցիչ դատալսումները և դատավճիռ կայացնելը
7. Համագործակցության վարույթի նպատակը և կիրառման պայմանները
8. Համագործակցության միջնորդությունը և համագործակցության վարույթով իրականացվող նախաքննությունը
9. Համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգը
10. Դատական վերանայման բողոքը
11. Դատական վերանայման բողոքի հիման վրա կոլեգիալ կազմով եզրափակիչ դատական ակտ կայացնելը
12. Վերաքննության նշանակությունը, առարկան, սուբյեկտները և ժամկետները
13. Վերաքննիչ բողոքարկման կարգը և վերաքննության սահմանները
14. Վերաքննության կարգով իրականացվող դատաքննությունը
15. Վերաքննության կարգով բողոքարկված դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերը
16. Վճռաբեկության էությունը, առարկան և սահմանները
17. Վճռաբեկ բողոքի ընդունման պայմանները և բողոքին ներկայացվող պահանջները
18. Վճռաբեկ բողոքով նախնական վարույթը
19. Վճռաբեկ բողոքով դատաքննությունը
20. Վճռաբեկության կարգով բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերը
21. Հատուկ վերանայման էությունը, սահմանները, դատաքննության ընդհանուր կարգը
22. Հատուկ վերանայումը վերաքննիչ դատարանում
23. Հատուկ վերանայումը վճռաբեկ դատարանում
24. Բացառիկ վերանայման էությունը և նշանակությունը
25. Բացառիկ վերանայման ընդհանուր դրույթները
26. Նոր ի հայտ եկած հանգամանքներով նախնական վարույթը
27. Բացառիկ վերանայման դատական վարույթը

28. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի ընդհանուր պայմանները
29. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով ապացուցման առարկան
30. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ մինչդատական և դատական վարույթների առանձնահատկությունները
31. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթի ընդհանուր բնութագիրը և այդ վարույթով ապացուցման ենթակա հանգամանքները
32. Բժշկական հարկադրանքի մինչդատական վարույթը
33. Բժշկական հարկադրանքի դատական վարույթը
34. Իրավաբանական անձին վերագրվող հանցանքների վերաբերյալ վարույթի ընդհանուր պայմանները
35. Իրավաբանական անձի վերաբերյալ մինչդատական վարույթը
36. Իրավաբանական անձի վերաբերյալ դատական վարույթը
37. Մասնավոր մեղադրանքով վարույթի ընդհանուր պայմանները
38. Մասնավոր մեղադրանքով դատական վարույթը
39. Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթի ընդհանուր պայմանները
40. Հեռակա վարույթի իրականացման առանձնահատկությունները
41. Միջազգային պայմանագրով սահմանված արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող անձանց վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները
42. Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձինք և նրանց գտնվելը ՀՀ իրավազորության ներքո
43. Դիվանագիտական անձեռնմխելիության և արտոնությունների ձևերը